



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱԾՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## ՎԱՐՈՒՅԹՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ԿԱՊԻ ԱՐԳԵԼՔԻ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդունել է, որ կալանավորումը, ինչպես ազատությունից զրկելու ցանկացած այլ միջոց, ուղեկցվում է անձի անձնական ու ընտանեկան կյանքի իրավունքի սահմանափակումներով: Այնուհանդերձ, անձնական ու ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի անբաժանելի մասն է կազմում այն, որ վարույթն իրականացնող մարմինները թույլ տան կամ ըստ անհրաժեշտության աջակցեն ընտանիքի հետ կապի պահպանմանը (*Messina v. Italy (no.2), no. 25498/94, 2000*): Ընտանիքի անդամների հետ կապի ու տեսակցության վրա դրվող արգելքը հանդիսանում է Կոնվենցիայի ներքո պաշտպանվող 8-րդ հոդվածի՝ անձնական ու ընտանեկան կյանքի պաշտպանության իրավունքի լուրջ միջամտություն (*Estrikh v. Latvia, N 73819/01, 2007*):

Որպեսզի նման միջամտությունը չհանդիսանա խախտում, վարույթն իրականացնող մարմինը պետք է ցույց տա, որ իրավունքի սահմանափակումը իրավաչափ է, ինչն էլ իր հերթին պետք է համապատասխանի երեք հիմնական պահանջների:

Առաջին, սահմանափակումը պետք է նախատեսված լինի ներպետական օրենսդրությամբ: Երկրորդ, օրենքը պետք է բավարար չափով հասանելի լինի և երրորդ, այնպես պետք է ձևակերպված լինի, որպեսզի անձը կարողանա կանխատեսել դրա հետևանքները: Այս առնչությամբ ուշադրության է արժանի ևս մեկ կարևոր հանգամանք: Վարույթն իրականացնող մարմինն տրված հայեցողության շրջանակը պետք է հստակ լինի, պետք է պարզ սահմանվի նաև դրա իրականացումը՝ նկատի ունենալով, թե ինչ նպատակ է հետապնդվում: Սա կարևորվում է նրա համար, որպեսզի ազատությունից զրկված անձն իր իրավունքները կամայական սահմանափակվելու դեպքում պատշաճ պաշտպանություն ունենա (*Moisevey v. Russai, N 62936/00, para 249, 2008*):

Երկրորդը, կիրառվող սահմանափակումը պետք է հետապնդի Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2 մասով նախատեսված նպատակներից մեկը, մասնավորապես՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:



## ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Եվ վերջապես, պետք է հիմնավորվի ժողովրդավարական հասարակության մեջ անհրաժեշտությամբ: Անհրաժեշտությունը այս կոնտեքստում նշանակում է, որ իրավունքի սահմանափակումը պետք է համապատասխանի ճնշող սոցիալական պահանջի և համաչափ

լինի հետապնդվող նպատակին: Այս առնչությամբ, թեպետ պետությունները ունեն հայեցողության որոշակի սահման, այնուհանդերձ, հենց պետության վրա է մնում ապացուցել ճնշող սոցիալական պահանջի առկայությունը (*Klamecki v. Poland (no. 2), no. 31583/96, § 144, 3 April 2003*):

Այն դեպքում, երբ ընտանիքի հետ տեսակցության իրավունքը արգելվել է նպատակ ունենալով կանխել հանցագործությունները և այլոց իրավունքների պաշտպանությունը, Դատարանը գտել է, որ նման իրավիճակում առկա է լուրջ միջամտություն անձի անձնական ու ընտանեկան իրավունքի պաշտպանությանը: Նույնիսկ այն դեպքում, երբ սահմանափակումը կիրառվում է որպես քրեական գործով ընթացող քննության խոչընդոտման կանխարգելիչ միջոց, օրինակ, տեղեկությունների փոխանցման միջոցով, Դատարանը նման հիմնավորումը բավարար համոզիչ չի համարել, քանի որ պետք է հնարավորինս կոնկրետ ներկայացվի, որ նույնիսկ հսկողության ներքո ընտանիքի անդամներին տեսակցելը ունակ է խաթարել քրեական գործով նախաքննությունը (*Kucera v. Slovakia, N 48666/99, paras 128-131*): Նման իրավիճակում Դատարանը գտել է, որ կիրառվող սահմանափակումը չի կարող համարվել անհրաժեշտ ժողովրդավարական հասարակության մեջ, և, հետևաբար, տեղի է ունենում Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

Ինչ վերաբերում է սահմանափակման եղանակին, ապա այստեղ կրկին քննարկման առարկա է դառնում դրա անհրաժեշտությունը: Օրինակ, ամսվա կտրվածքով առավելագույնը երկու տեսակցություն տրամադրելը, առանց ձկունություն տալու այդ կարգին, պահանջում է յուրաքանչյուր անհատական գործով քննարկել դրա անհրաժեշտությունը: Եթե կալանավորվածի կինը չի հանդիսանում ոչ վկա, ոչ էլ գործով մեղադրյալ, ինչը վերացնում է գործի նախաքննությանը խանգարելու ռիսկերը, ապա լուրջ քննության առարկա պետք է դառնա կնոջ հետ տեսակցության սահմանափակումը: Նույն մոտեցումը կիրառելի է նաև անչափահաս երեխաների հետ տեսակցության արգելքի պարագայում: Դատարանի մոտեցումը նմանատիպ իրավիճակներում հանգում է նրան, որ կիրառվող սահմանափակումը այնպիսի միջամտություն է անձի անձնական ու ընտանեկան կյանքին, որը չի հիմնավորվում ոչ կալանքին բնորոշ տեսակցությունների արգելքով, ոչ էլ դրանով հետապնդվող նպատակով (*Moisevey v. Russai, N 62936/00, para 252-255, 2008*):



# ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊՐԱԿՏԻԿԱ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ուղղակիորեն չի ամրագրվում կալանավորված մեղադրյալի՝ ընտանիքի կամ արտաքին աշխարհի հետ շփումը արգելելու՝ վարույթն իրականացնող մարմնի լիազորությունը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 3-րդ մասով, մասնավորապես, նախատեսվում է միայն, որ վարույթն իրականացնող մարմնի լիազորությունը քննչական մեկուսարանի վարչակազմին տալ ցուցումներ՝ *մեկ քրեական գործով, ինչպես նաև իրար հետ կապված մի քանի քրեական գործերով մեղադրյալներին միմյանցից անջատ պահելու, կալանավորված այլ անձանց հետ մեղադրյալի հաղորդակցվելը կանխելու վերաբերյալ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ցուցումներ, որոնք չեն հակասում կալանավորվածներին պահելու՝ օրենքով սահմանված ռեժիմին:*

Ընտանիքի ու արտաքին աշխարհի հետ կապի սահմանափակումը նախատեսված է <Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին> ՀՀ օրենքով, որի 15-րդ հոդվածը նախատեսում է, որ *Քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:*

Նույն օրենքի 17-րդ հոդվածը նախատեսում է նաև հեռախոսային խոսակցությունների սահմանափակման հնարավորություն: Մասնավորապես, վերջինս սահմանում է, որ <Քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց հեռախոսային խոսակցությունները կարող են արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին>:

Կարգավորման նման պայմաններում օրենսդրորեն հստակեցված չէ, մասնավորապես, թե որն է քննության շահը և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ինչ չափանիշներով պետք է վարույթն իրականացնող մարմինը գնահատի այն, ինչպես նաև արտաքին աշխարհի հետ՝ կալանավորված անձի շփման ռիսկերը, ինչքանով պետք է սահմանափակումը հիմնավորված լինի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում: Արդյունքում, պրակտիկայում օրենսդրական նման ձևակերպումները վարույթն իրականացնող մարմնին տրամադրում են հայեցողության լայն շրջանակ, ինչը կարող է հանգեցնել անձի իրավունքների կամայական սահմանափակման:



## ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վերջին շրջանում հասարակական բուռն քննարկման առարկա է դարձել ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի նախկին տեղակալ Արսեն Բաբայանին կալանավորելու ու քննիչի կողմից նրա տեսակցությունների ու հեռախոսային խոսակցություններն արգելելու հարցը:

Անհրաժեշտ է փաստել, որ կալանավորված մեղադրյալների տեսակցությունների և արտաքին աշխարհի հետ այլ կերպ կապ պահպանելու արգելք սահմանելու պրակտիկան լայնորեն կիրառվում է ՀՀ քննչական մարմինների կողմից: Հատկապես 2016թ. ի վեր նման սահմանափակումներ կիրառվել են հանրային հնչեղություն ունեցող մի շարք գործերով, օրինակ՝ Ժիրայր Սեֆիլյանի, Մասնա Ծոեր խմբի անդամների, ինչպես նաև զանգվածային անկարգությունների մեջ մեղադրվող անձանց նկատմամբ: 2018թ. ի վեր նման սահմանափակումների են ենթարկվել, օրինակ, Մանվել Գրիգորյանը, ինչպես նաև Ռոբերտ Քոչարյանը:

Այսպես, ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչի համապատասխան որոշման համաձայն՝ *նկատի ունենալով, որ մեղադրյալ Արսեն Բաբայանի տեսակցությունը մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, ինչպես նաև նրա հեռախոսային խոսակցությունները կարող են բացասական անդրադարձնալ քրեական գործի քննության լրիվության, օբյեկտիվության և բազմակողմանիության վրա, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 55-րդ հոդվածներով, հիմք ընդունելով՝ Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին՝ ՀՀ օրենքի 15-րդ և 17-րդ հոդվածները, որոշեցի, արգելել մեղադրյալ Արսեն Բաբայանի տեսակցությունն ու հեռախոսային խոսակցությունները մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ<sup>1</sup>:*

Քննիչի որոշումը խնդրահարույց է հետևյալ պատճառներով.

Այսպես, քննիչի կողմից կիրառվել է սահմանափակում, որը արգելում է մեղադրյալին տեսակցել և այլ կերպ կապ պահպանել մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ: Սակայն վարույթն իրականացնող մարմինը որևէ հիմնավորում չի ներկայացրել, թե ինչով կարող են մեղադրյալի շփումներն արտաքին աշխարհի հետ խոչընդոտել գործի քննության լրիվությունը, օբյեկտիվությունն ու բազմակողմանիությունը:

<sup>1</sup> Մեջբերումը կատարվել է Ա. Բաբայանի փաստաթղթի կողմից սոցիալական ցանցում հրապարակված որոշումից:



## ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐԻ ՊԱՃՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ավելին, կիրառված սահմանափակումն **ընդհանուր արգելք** է սահմանում արտաքին աշխարհի հետ անձի շփումներին՝ առանց մասնավորեցնելու և հիմնավորելու այն անձանց

շրջանակը, որոնց հետ շփումը կարող է ազդել գործով քննության վրա, այդ թվում՝ ընդգրկելով ձերբակալված կամ կալանավորված անձանց հետ անարգել տեսակցելու իրավունք ունեցող պաշտոնատար անձանց, ինչն առավել խնդրահարույց է դարձնում կիրառված սահմանափակման անհրաժեշտությունը:

Ինչպես վերը նշվեց, ընտանիքի հետ տեսակցությունների և այլ կերպ կապի պահպանման սահմանափակումներն առավել խիստ հիմնավորումներ են պահանջում: Մասնավորապես, վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է հիմնավորել, թե օրինակ, մեղադրյալի կինը կամ մանկահասակ երեխաները, ովքեր քրեական գործով որևէ կարգավիճակ չունեն, ինչպես կարող են ազդել քննության լրիվության, օբյեկտիվության և բազմակողմանիության վրա, չի ներկայացվել որևէ կոնկրետ հանգամանք, որը կարողարացնի կիրառվող սահմանափակումը:

Որոշման մեջ առհասարակ բացակայում է պատճառաբանական մասը: Քննիչի կողմից կայացված մեկ էջանոց որոշման կեսը պարունակում է հղում ներպետական օրենսդրությանը, ինչը նվազեցնում է վարույթն իրականացնող մարմնի մոտ որոշումների կայացման օբյեկտիվությունն ու անկողմնակալությունը, և հանգեցնում սահմանափակման կամայական կիրառման:

Վերոգրյալը թույլ է տալիս արձանագրել, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից, այս և նմանատիպ գործերով, նմանօրինակ որոշումների կայացումը ունակ է հանգեցնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված իրավունքների խախտման: